

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄՈՏ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ, ԺԱՄԸ 16:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Առնակ Ավետիսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ՝ Արթուր Այվազյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ՝ Գոռ Հովհաննիսյանի
- ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության ներկայացուցիչ՝ Անդրանիկ Սողոմոնյանի
- ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արմավիրի մարզային կենտրոնի պետի պարտականությունները կատարող՝ Արթուր Ասատրյանի
- Համաճարակաբան՝ Արսեն Դանիելյանի
- Սպանդանոցների ներկայացուցիչներ՝ Արսեն Հակոբյանի
Սերգեյ Մարգարյանի
Գ.Հակոբյանի
- Լրատվամիջոցների ներկայացուցիչների
- Խորհրդակցությանը մասնակցում էին նաև ՀՀ Արմավիրի մարզի տարբեր համայնքներից ընդհանուր թվով շուրջ 40 անասնատերեր և մսագործներ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում առկա սպանդանոցների գործունեության և անասունների մորթի կազմակերպման հիմնախնդիրների վերաբերյալ

/ Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ – Էդվարդ Հովհաննիսյան/

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը խորհրդակցության մասնակիցներին հայտնեց, որ խորհրդակցության կազմակերպման հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում առկա սպանդանոցների գործունեության և անասունների մորթի կազմակերպման հիմնախնդիրները քննարկելն է: Նա նշեց այն փաստը, որ գյուղատնտեսությունը համարվում է ինչպես Արմավիրի մարզի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության տնտեսության կենսական նշանակություն ունեցող առանցքային ճյուղերից մեկը, իսկ ագրովերամշակման ոլորտը՝ գյուղատնտեսության զարգացման քարշակող ուժն է, որն ըստ էության ձևավորում է գյուղատնտեսական ապրանքների

շուկան և իր դերակատարությամբ նպաստում է գյուղական տարածքների զարգացմանը և երկրի պարենային անվտանգությանը՝ բնակչությանն առաջարկելով որակյալ ու անվտանգ սննդամթերք:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը խորհրդակցության մասնակիցներին հիշեցման կարգով իրազեկեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 29-ին ընդունած և 2006 թվականի օգոստոսի 12-ին ուժի մեջ մտած «Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման կարգը սահմանելու մասին» N 993-Ն որոշմամբ հաստատված Կարգով, ինչպես նաև հետագայում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համապատասխան դրույթներով հնարավորինս կարգավորվում են սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների և թռչունների (սպանդային կենդանիներ) սպանդի կազմակերպման հետ կապված հարաբերությունները: Ավելին, նշված իրավակարգավորումների իմաստով կենդանական ծագման հումքի արդյունաբերական վերամշակման ոլորտում տիրող վիճակի վերլուծությունը ցույց է տվել, որ կենդանիների մորթի կազմակերպումն ու սննդամթերքի արտադրության նպատակով կենդանական ծագման հումքի վերամշակումը ամբողջ հանրապետության սննդարդյունաբերության առաջ ծառայած և հրատապ լուծում պահանջող կենսական նշանակություն ունեցող խնդիրներից մեկն է: Այդ գործընթացում սպանդանոցները հանդիսանում են մսի վերամշակման առաջնային օղակը և սահմանված չափորոշիչներով դրանց կառուցմամբ ու գործարկմամբ լուծվում են ինչպես տնտեսական, անասնաբուժասանիտարական, այնպես էլ բնապահպանական մի շարք խնդիրներ: Այդ առումով սպանդանոցները, լինելով սննդամթերքի արտադրության շղթայի մաս, գործնականում պետք է ապահովված լինեն, ըստ կենդանու տեսակի, սպանդի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումներով, որը գործնականում երաշխիքներ կստեղծի և էլ ավելի կխթանի սպանդանոցային մորթի արդյունավետ կազմակերպման գործընթացին:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը խորհրդակցության մասնակիցներին տեղեկացրեց նաև, որ Հայաստանի Հանրապետությունում առկա ընդհանուր թվով 46 սպանդանոցներից 9-ը (որոնցից երկուսը՝ շարժական) գտնվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում: Ակնառու փաստ է այն, որ ներկայումս

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում գործող սպանդանոցների թվաքանակը, հզորություններն ու տարածքային տեղաբաշխվածությունը գործնականում դեռևս բավարար չեն արդյունավետ ապահովելու կենդանիների պարտադիր սպանդանոցային մորթը: Ի դեպ, Հայաստանի Հանրապետությունում առկա սպանդանոցներում կենդանիների մորթը արդյունավետ կազմակերպելու և սպանդանոցային մորթը խրախուսելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 15-ի N 142-Ն որոշմամբ սահմանվել են Հայաստանի Հանրապետությունում կենդանիների սպանդի կիրառման ոլորտները և ժամանակացույցը, ըստ որի հանրապետության ամբողջ տարածքում պետք է անցում կատարվեր սպանդանոցային պարտադիր մորթի: Ավելին, 2020-ի հունվարի 15-ից մսի սպանդանոցային ծագման պահանջը պարտադիր է համարվել, սակայն պարտադիր սպանդանոցային մորթին համատարած անցում կատարելու գործընթացի կազմակերպման նկատմամբ ընդհանուր կարգով իրականացված թույլ վերահսկողության պայմաններում և նշված ծրագրում առկա բազմաթիվ թերությունների պատճառով այդ կարևոր ծրագիրը գրեթե մնաց անկատար:

Այնուհետև, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը հանգամանորեն լսեց օրակարգային հարցի քննարկմանը իրենց մտահոգություններն ու տեսակետներն արտահայտելու ցանկություն հայտնաձև բոլոր մասնակիցներին, ովքեր մտքերի փոխանակմամբ ընդհանուր կարգով անդրադարձան սպանդանոցային մորթի կազմակերպման ոլորտում առկա մի շարք խնդիրների, որոնք հիմնականում վերաբերում էին արդի փուլում սպանդանոցային մորթի կազմակերպման գործընթացի նկատմամբ առկա վճռորոշ հանրային աջակցության բացակայությանը, սպանդանոցների գործունեությունը կարգավորող իրավական դաշտի անկատարությանը, պահանջվող չափորոշիչներին համապատասխան համայնքային փոքրածավալ սպանդանոցների կառուցման անհրաժեշտությանը, սպանդանոցների համար հարկային արտոնություններ սահմանելուն, գործող, ինչպես նաև գոյություն ունեցող չօգտագործվող սպանդանոցները պատշաճ կարգով վերազինելուն, մորթի ենթակա անասուններին սպանդանոց տեղափոխող համապատասխան սարքավորումներով հագեցած ավտոտրանսպորտային միջոցների բացակայությանը, պետական գնման գործընթացներում սպանդանոցների դերակատարության բարձրացմանը, սպանդանոցային մորթի կազմակերպման նկատմամբ վերահսկողության ուժեղացմանը և այլն:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, լսելով և համատեղ քննարկելով վերը բարձրացված հարցադրումները, դրանց վերաբերյալ համապատասխան պարզաբանումներ տալով և սպանդանոցային մորթի կազմակերպման բնագավառում ներկայումս առկա բոլոր խնդիրների լուծման գործընթացի հաջողության միակ գրավականը համարելով բոլոր մասնակիցների՝ մատակարարի (անասնապահությամբ զբաղվող սուբյեկտն է), սպասարկողի (որոշակի մասնագիտական հմտություններով ու ունակություններով

օժտված աշխատակազմը), պայմանագրային հիմունքներով գործող իրացման շուկայի (վաճառքի ու վերանշակման բազում կետերը) և վերջնական սպառողի (բնակչությունն է, ողջ հասարակությունը) վստահության երաշխիքների վրա հիմնված հստակ համագործակցությունը, ոլորտի հետ կապված խորհրդակցության բոլոր մասնակիցներին հորդորեց փոխադարձ վստահությամբ և աջակցությամբ ակտիվացնել համագործակցությունը՝ սպանդանոցային մորթի ճիշտ կառավարումը հնարավորինս ապահովելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը օրակարգային հարցի քննարկման արդյունքներն ամփոփելով և միաժամանակ համոզվածություն հայտնելով, որ ոլորտում առկա բոլոր խնդիրները համապատասխան իրավակարգավորումներով իրենց լուծումները կստանան ժամանակի ընթացքում, խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

Հայաստանի Հանրապետության

12/15/2023

X 

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արմավիրի մարզպետ՝
Էդվարդ Հովհաննիսյան

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության
պետ՝ Դավիթ Դավթյան

